՝Մենք ձեզ համար-էլ սլարտական ենք միշտ տալու պատասխան,  
 Դուք սղծում էք ձեզմով տարերք՝ ջուրն ու հուրը սրբաղան.  
 Եւ ուզում էք որ ձեր մոլար կրթօնի մէջ միշտ կենար,  
 Չէք մըտածում, որ մեր վերայ է ձեր մեղքը բովանդակ:

՝Դասի՛ճք, տարէ՛ք սոցա բանտը և պահեցէ՛ք մինչ վաղիւ,  
 Առաւօտը սլարսկական գունդ սլարաստ կաղնած բազմաթիւ,  
 Խուժաստանի Անյուշ բերդը կ'առաջնորդէ ուղղակի՞:  
 Դասի՛ճք առին նախարարաց և փակեցին ի բանտի:

ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Մըթին բանտի մէկ քնջուճը տրտում նստած էր Վարդան,  
Սրտի մէջը արիւնաներկ երևում էր Հայաստան,  
Կանայք, աղջկունք գերի ընկած, երիտասարդք կատորուած,  
Եկեղեցիք աւեր դարձած, սուրբ Հաւատքը ջրնջուած:

Նորա պայծառ երեսուճը գրծագրուած կար յայանի,  
Ինչ խորհուրդք որ ամբոխւում են ի խորագոյն խորշ սրտի.  
Լրութիւնը պերճախօս էր քան ըղլեղուալ յայտները,  
Նախարարքը հասկանում են նորա հոգւոյ ցաւերը:

Սորա թէպէտ ամենեքեան միւս քնջումն են նստած,  
Եւ իւրեանց մէջ շրջնջում են՝ երեսն առ նա դարձուցած,  
Բայց հեռուէն իմանում են՝ որ Վարդանը չէ յօժար  
Ս, յն խորհրդոյն, ինչ որ այն ժամ նոցա մտքի մէջը կար:

Նախարարքը խորհում էին արքայի կամք կատարել,  
Եւ հրնարիւք այն վճտանգէն գրլուխները ազատել.  
Բայց երբ երթան, ու Հայաստան իրանց տներն հասանեն,  
Օրինաւոր սրտերաղմալ այն սուտ ուխտը լուծանեն:

Մենեքեան միարան են սյապէս գրտնել հրնարը,  
Բայց յոյս չունին, որ նոցա հետ համաձայնուի Վարդանը.  
Ճանաչում են նորա սիրտը, անկեղծ սէրը հաւատոյ,  
Իմանում են, որ չի հաճիր նա նոցա այն խորհրդոյ:

Երբ որ ամեն հրնարները անդօր, անգործ մընացին,  
Մէկ հրնար կար, որ ամենայն հրնարներու էր վերջին.  
Եթէ այն-էլ չըյաջողէր՝ պիտի յոյսը կըտըրուէր,  
Ու Հայաստան հեթանոսաց՝ անհաւատից կեր լինէր:

Քաջ վարդանայ պատիկ փեսան՝ Կամսարական Արշաւիր  
Նախարարաց հետն էր այնտեղ, ակնկորեալ դէպ յերկիր.  
Նըրան միջնորդ կարգենք, ասին, որ վարդանին յորդորէ,  
Որ վարդանն-էլ նախարարաց աղաչանքը կատարէ:

Դժուարութեամբ յանձըն առաւ Արշաւիրը այն բանը,  
Քիտէր, որ չէ կարող երբէք ականջ դնել վարդանը.  
Լաւ էր նորան իսկոյն հետի ճանփայ ընկնել Խուժաստան,  
Քան առ երեսս կեղծաւորիլ, առնուլ կըրօն մոգութեան:

Տեսաւ վարդան, որ իւր փեսան բան է ուղում ասելու,  
Բայց վախենում է իրենմէն, որ թոյլ չըտայ խօսելու.  
Ինքը ըսկիզբն արեց խօսքին, և Արշաւիր սիրտ առաւ,  
Լըռութիւնը՝ որ մինչև այժմ տարրացեալ կար, վերջացաւ:

»Հայրիկ, ասաց Արշաւիրը, և աչքերէն բղխեցին,  
Ուրեմըն էլ չէք կամենում կանգնիլ սրաշտպան խեղճ աղդին,  
Առաւօտը կ'ընկնենք ճանփայ դէպի խորին Խուժաստան,  
Որ համարձակ մոգք գիշատեն մեր չարաբաստ Հայաստանն»:

Վարդան ասաց. »Կարե՞մ, որդեակ, ես միայնակ դէմ կենալ,  
Որ մեզ վաղիւ դէպ Խուժաստան չըհարկադրեն ընթանալ.  
Չըգիտե՞ս որ՝ ըսպարապետ առանց զօրաց՝ է նոյնը,  
Ինչպէս առանց ոչխարներու է դաշտումը հովիւը»:

Արշաւիրը պատասխանեց. »Քիտեմ, չըկայ ժամ մարտի,  
Բայց կայ հրնար, որ անկըռիւ կըյաղթուի թըշնամի.  
Խարէութեամբ մեզ բերին աստ, խարելով տի ելանենք,  
Մեր խորհուրդը ո՛չ թէ այստեղ, այլ Հայաստան կույայտնենք:

»Արդեակ, յանկարծ կանչեց Վարդան, ի՞նչ ես ուզում ասելու, Կարո՞ղ է Հայ Վարդան իշխան խաբերայ մոգ դառնալու, Ի՞նչ պատասխան տամ զոքանչիդ, ի՞նչ ասեմ և քու հարսին, Վարդանոյչը կառնո՞ւ յանձն լինիլ զանդիկ մոգի կինն«:

Պատասխանեց Արշաւիրը. »Մի՞թէ զանդիկ կըլինիմ, Թէ սրտումըս սուրբ պահպանեմ քրիստոսական կրօնն իմ, Ընկել ենք այս վրտանդի մէջ, մինչ ելանենք, ձևանանք, երբ որ հասնենք Հայոց երկիր, էլ մեր հաւատն ունենանք«:

Միւս նախարարք-էլ միաբան նոյն խօսքերը կրկնելով Ասում էին, մեզ խընայէ՛, ընտանիքըդ յիշելով. Մեր կորուստը՝ բոլոր ազգի, բոլոր երկրի կորուսան է, Նա է ազգի միայն փրկիչ, ով փրկութիւն հընարէ:

Վարդան ասաց. »Ես որտարատ եմ զոհել անձրս ձեզ համար, Դուք ասացէ՛ք, եթէ գիտէք մեր փրկութեան մէկ հընար. Լաւ չէ՞ մեռնիլ մեզ քրիստոնեայ, քան ծառայել մոգութեան, Դուք ասացէ՛ք, իմ բարեկամք, ի՞նչ է հընար փրկութեան«:

Արշաւիրը էլի կրկնեց. »Հայր իմ, աներ, ինձ լսէ՛, Թագաւորի հրամանը վաղուեան օրը կատարէ՛, Յետոյ երբ որ վերադառնանք երկիր Հայոց, կըղղջանք, Հայաստանին կարենք դառնալ թէ՛ աղատիչք, թէ՛ սաշտալանք«:

Յոգևոց հանեց և արտասուեց առիւծասիրտ Վարդանը, Ասաց. »Էգուց առաւօտը առնունք Պարսից պիղծ դենը, Յետոյ երթանք Հայոց երկիր, է՛լ ո՞վ մեզ կուճանաչէ, երբ մեր բերնով ասած լինինք, թէ Յիսուսը Աստուած չէ«:

Նախարարքը փաթըթուեցան քաջ Վարդանայ ոտքերուն, Ասին՝ ո՞վ է կարող ասել հայհոյութիւն սուրբ Արդւոյն, Միայն երբ որ արև ծագէ՝ ծունրը պիտի մենք դընենք, Իբրու այնու թագաւորի հրամանը կատարենք.

Մըշաւիրը ասաց, Տայրիկ, դէպ արեւելք աղօթել,  
 Ընդհանրական ժողովքի մէջ Տայրասպետք են աւանդել.  
 Արեգական դէմ ծունր կրկնենք մտքերս առ Տէր ուղղելով,  
 Այս վտանգէն մեզ ազատունք, յիմար Պարսկին խարելով:

Մայր երբ որ օրը հասնի թշնամեաց դէմ սուր հանել,  
 Գիտես՝ որ միշտ քո աջ կողմը ես իմ զօրօք եմ կանգնել.  
 Եթէ դիպուած քեզ մահ քերէ, ես-էլ եմ քո զինակից,  
 Անբաժան եմ կենդանութեամբ, մահուդ-էլ եմ մահակից:

» Գիտեմ, ասաց Վարդան լալով, ոչ մեկդ-էլ չէք փակելիւր,  
 Ո՛չ մահուանէ և ոչ մարտէ, երբ որ հասնենք մեր երկիր.  
 Բայց ո՛վ կուտայ մեզ թողութիւն ուրացութեան յանցանքին,  
 Ո՛վ Տէր Յիսուս, ա՛յս է արիտուր քո երախտեաց ի խաչին...

Մըշաւիրը դարձեալ ասաց, » Տայրիկ, խաչեալն է ուղում,  
 Որ դու ապրիս և հայրենեաց տաս վտանգէն ազատում:  
 Այս-էլ զո՛հ է նորա համար, որ խաչն իսպառ չանարգուի,  
 Հայաստանը՝ մեր կորչելով՝ անշուշտ պիտի կորսուի:

Մէկ երկու ժամ մենք կարող ենք մեր հաւատը ծածկելու,  
 Եւ արևը կամ կրցակը նոցա նման սաշտելու.  
 Սրտագէտը խօս կրտսնէ՞, որ մենք Պարսկին ենք խարում,  
 Ու մեր հոգւոց սուրբ սաշտօնը միայն Նորան ենք ձօնում:

*(Faint mirrored bleed-through text from the reverse side of the page)*

## ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԳ

Ծագեցաւ այն առաւօտը, որ խնդութիւն էր մոզայ,  
Թագաւորը պիտի տեսնէր հըլութիւնն իշխանաց.  
Չէր հասկանում Յազկերտ արքայն, թէ այն հընար էր միայն,  
Որ նախարարք կարողանան ոտքը դնել Հայաստան:

Երեզակը զուարթերես երևեցաւ եղբրտքէն,  
Դէպ արևելք երկիրսագին իշխանք իւրեանց տեղերէն,  
Զուարճացաւ բռնաւորը, Միհրր-Ներսէհ ցնծացաւ,  
Զենդ-Աւետի յաղթանակը ամենայն տեղ տօնուեցաւ:

Թագաւորի ուրախութեան ոչ մի չափ կար, ոչ սպայման,  
Պարսիկք ընկան դիւանէն դուրս, Հայոց իշխանք բազմեցան.  
Մազդեղանցի աջակողմը Քաջն Վարդան էր նստած,  
Արքայական զարդարանքով պճնազարդած, պերճացած:

Չէր դադարում թագաւորը Մամիկոնեանց դովեստէն,  
Դրուատելով վեր էր հանում քան զամենայն տոհմերէն.  
Եւ Վարդանի քաջութիւնը, անչափ, անհուն երախտիք,  
Ըստանում են ամեն մէկը բիւրասպատիկ դրուատիք:

Եսաց Յազկերտ. — Ի՞նչ աղգէ էր սերեալ Մամիկոն ձեր նախնին:  
Պատասխանեց Քաջն Վարդան. — Ճէնաց աղգէն, երկրէն Չին:  
Հարցուց արքայն. — Ե՞րբ էր եկել Մամիկոն իշխան՝ Հայաստան:  
Տուեց Վարդան պատասխանի. — յԱրշակունեաց տէրութեան:

Արկնեց արքայն.—Ունի՞ս զաւակ, կին, կամ որդիք, ընտանիք:  
Վարդան տուեց պատասխանի.—Չունիմ ուստերք կամ որդիք,  
Միայն երկու դստերք ունիմ սմուսնացած փեսայից,  
Որ արել են ինձ թոռանց տէր, և մէկ ի ծեր պապերից:

Թագաւորը և՛ս առաւել եղաւ այստեղ փորձասէր,  
Ասաց.—Ո՞ւմը է հարսնացած և ի՞նչ անուն քո դստեր.  
Վարդան ասաց.—Շուշանիկ է մեծ դստերըս անունը,  
Վարդանոյշ կամ Վարդանանոյշ՝ անուանվում է պատիկը:

—Մեծին առել է վարդանը՝ բրդեշխ վրցաց աշխարհի,  
Փոքրը կին է Արշաւիրոյ՝ Կամսարական իշխանի,  
Որ այժմ աստ է, Թագաւոր, և էր ինձ միշտ մարտակից,  
Երբ որ Հոնաց դէմ պատերազմ էինք անում ընդ Պարսից:

Յաղկերտ արքայն մեծ մեծ պարգև Արշաւիրին շնորհեց,  
Կամսար ազդի մեծ ազդութիւնն շատ փառքերով մեծարեց.  
Յետոյ էլի Վարդանի հետ ըսկիզբն արաւ խօսելու,  
Ասաց, —Ի՞նչ էր յատուկ պատճառ քո Յունաստան երթալու:

Պատասխանի տուեց Վարդան. Շատ պատճառ կար այդ բանին.  
Նախ որ՝ մէկ էր մեր կրօնը, մէկ ենք կասլով օրէնքին,  
Երկրորդն-էլ որ՝ իմ մանկութեան ժամանակին գընացած,  
Նոցա մեծ մեծ դպրոցներում եմ դպրութեամբ կրթուած:

Իմ մօրըս հայր՝ Սահակ Պարթև շատ մանկուսք էր ուղարկել,  
Որ յունական կրթութեան մէջ կարողանան վարժուել.  
Ես-էլ նոցա մէջ մէկն էի, ես ունիմ շատ ծանօթներ,  
Այն պատճառաւ էի կրկին ես Յունաստան այց ելեր:

Արքայն հարցուց.—Ապա ի՞նչ տեղ զիմնապէս սովորեցար:  
Վարդան ասաց.—Նահատակաց զիրք կարդալով անդադար.  
Մեզ յայտնի է՝ թէ համակրենն ի՞նչ է խնդրում մեզիմէն,  
Պարտական են քրիստոնեայքը լինել տեղեակ այն կողմէն:

—Ո՛վ կուտայր որ՝ առայ Յազկերտ, քրիստոնեայքը գիտնային,  
Թէ ի՞նչ է բուն ըսկզբունքը Չրադեշեան լոյս դենին,  
Աշխարհ այսպէս խաւարի մէջ խրուած, թաղուած չէր մնար,  
Մարդկան ազգի փրկութիւնը է՛լ չէր լինիր անհնար:

Եւրպիտ քաղցրիկ երևեցաւ Վարդանի պարզ երեսին,  
Ասաց. — Ա՛րքայ, յաւիտեան՝ կաց, և տուր ունին իմ ձայնին.  
Մարդկան ազգի փրկութիւնը այսուհետև հետի չէ,  
Եւ խաւարի հալածուիլը գողցես եկել հասել է:

Տեղէն թրուա թագաւորը և Վարդանին փաթըթուեց.  
Ասաց. — Յոյս՝ շատ ուրախ եմ, որ ինձ այսօր չըխարեց.  
Երազումըս ինձ Քաջք ասին, թէ Վարդանը կարող է,  
Ո՛չ թէ միայն Հայաստանին, այլ և Յունաց դարձրնէ:

—Իմ փառազուն Մամիկոնեան, իմ անխաբ յոյս, ապաւէն,  
Այդ քաջութիւնն ևս միայնակ սրահանջում եմ Վարդանէն.  
Դու Հայոց մէջ սխալի սիրես պայծառ դենն մոգական,  
Աշխատութեան վարձրդ թագ է, և բուլանդակ Հայաստան:

Ծուներ դրբին իշխանք Պարսից՝ թագաւորի առջեր,  
Եւ ասացին արժանի է Հայոց թագին Վարդանը.  
Թէ Հայաստան ուղիղ սրտով դենիմաղդեղն ընդունի,  
Ի՞նչ են Յոյնքը, որ կարենան ընդդէմ կանգնել մեր բաղկի:

Վարդան տուեց պատասխանի, երբ որ ամենք սուս կացան,  
—Զե՛մ պարծենար, Ա՛րքայ հըղօր, թող մէկ հասնեմ Հայաստան.  
Ես այնպէս բան սխալի անեմ, որ ոչ միայն ազգ Յունաց,  
Այլ և Հրոմ կըղարմանայ, կըհիանայ Տէրն Արեաց.

Սկրսաւ ծափ տալ թագաւորն իւր հոգւոյ մեծ հրճուանքէն,  
Հոգին ուրախ չէր դիմանում, դուրս էր թռչում մարմինէն.  
Բռնեց ամուր նորա ձեռքէն՝ ասաց — Վարդան, գրնացէ՛ք,  
Իմ բաղձանաց՝ ձեր քաջութեամբ՝ խնդրում եմ ինձ հասուցէ՛ք:

Վարդան ասաց. Ա՛րքայ դորեղ, իմ խոստումներս հաստատ է,  
 Ի՛նչ որ մտքիս մէջ դրել եմ, ամեն-էլ է ի սրտէ.  
 Ո՛չ կեանքս եմ խնայելու, և ոչ երբէք արխնըս,  
 Շուտ կուլըսես, Քաջ Թագաւոր, թէ ի՛նչպէս է խոստումս:

— Վարդան, կանչեց Յաղկերա արքայն, Արքայական է Պրսակ  
 Քլխոյդ համար պատրաստ կազմած, քան զիմ խոյրն սկսածառ Թագ,  
 Ինձ բարեկամ սխախ կոչուիս, Աստուածորդոյս բարձակից,  
 Յաւերժական երանութիւն կու ըստանաս քու աղդից:

— Գիտեմ, արքայ, որ իմ աղգըն չի մոռանար այդ դործըս,  
 Գիտեմ, յաւերժ սխախ մընայ աղգի սրտում անունըս.  
 Պրսակի-էլ քաջայոյս եմ և անթառամ պրսակի,  
 Ի հարկէ որ այդ իմ գործն է, ըստարասկես եմ աղգի:

Յաղկերա կրկնեց. գիտե՛ս Վարդան, որ սլարտական եմք տոհմիդ  
 Արտաշէրը խոստացել էր թագ Անակայ մեծ պապիդ.  
 Գու ես նորա շառաւիղը, ես-էլ յաջորդ իմ նախնւոյ,  
 Թագ ու պրսակ իրաւունքով են սպասում քում գլխոյ:

— Հանդա, իշխանք, գունդ կազմեցէ՛ք, որ շուտ երթան Հայաստան,  
 Այսուհետեւ Հայկազնէից սպարապետն է Վարդան,  
 Թող Վասակը մարդսան կոչուի, մինչև կամքս կատարուի,  
 Եւ Վարդանը թող սպասէ անհուն, անբաւ պարգևի:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԳ

Տիարան բոլոր ոտքի ելաւ, որ օր Հայքը դուրս եկան,  
Պարսից հեծեալք, սպառազէնք բանուաւ, մարտուաւ են ճանախան,  
Հաղար ու բիւր զննողները լըքցրել են դաշտերը,  
Ուստի պիտի անցանէին ճանապարհորդ Հայերը:

Եւ աջէն են զօրքը դընուաւ թմբուկները դարնելով,  
Նըժոյգ ձիոց վերայ նըստած՝ զինուք, զարդուք սիւղալով:  
Մըտքի մէջը հարընտանուաւ Հայաստանի աւարէն,  
Ինչ որ պիտի յափշտակեն, երբ բնակչաց կողոպտեն:

Եւ ինչ կարծիք կայ աւարին, նախարարքը ուրացան,  
Մողաց բաժին մընաց անտէր լայնածաւալ Հայաստան,  
Քնա՛, Պարսիկ, ու ժողովէ՛ կողոպուտը անարդել,  
Ո՛վ է կարող քա՛ առջիւր հակառակիլ, կալ արդել:

Պարսից յեանէն նախարարքն են դնուաւ հեծած ձիերը,  
Ըսպասաւորք դրաստներով բերուաւ յեանէն բեռները,  
Մեծ կարաւան էր այս ճանախին, զօրաց սրաշար քաւական,  
Թէ՛ ուտելիք, թէ՛ հագնելիք, թէ՛ սուր, թէ՛ դէն, վառանայան:

Մողպետ, և ու թ հարիւր հատ մողք, ծառաներով, ճորտերով,  
Կանայք, տիկնայք և մեծուհիք նաժիշտներով, զարդերով,  
Ոմանք ձիով, ոմանք ջորւով, ոմանք իշին են նստած,  
Շատն էլ շքնաղ սաստգարակում են արեւէն զաճկուած:

Մեծահանդէս է չուելը, մեծահանդէս՝ վէր դալը,  
 Հայնածաւալ տարածվում են տաղաւարն ու խորանը.  
 Գաշտ ու բլուր ծածկում էին խրաքանչիւր իջւանք,  
 Այսպէս չքնաղ զբօսանքով էին դալիս մեր իշխանք:

Թէ դետոց մօտ են հասանում, իսկոյն ուռկանք են ձգվում,  
 Ճաշու և կամ ընթրեաց համար նոր նոր ձրկունք են բռնվում:  
 Թէ անտառի են հանդիպում՝ առատ օրսեր էրէոց,  
 Խորտիկներով են զարդարում շատը նոցա սեղանոց:

Մեկասկած են Պարսիկք և մոգք, մինչև հասին Հայաստան,  
 Այստեղ փոխուեց այն սլաակերը, բացուեցաւ նոր տեսարան.  
 Հաղարաւոր գիւղականքը յառաջ եկան փէտերով,  
 Պարսից զօրքը դէմ չըտուին խրեանց սրբով, նետերով:

Իշխանք Հայոց յառաջ եկան, որ խաղաղեն ամբօխին,  
 Նոցա-էլ քիչ մընաց կարծեմ, որ հասանէ ծայր փայտին.  
 Գուք ուրացաք՝ բաւական է, ասում էին գիւղացիք,  
 Մեզ-էլ կարող էք ուրացնել. խնդրենք թողնել այդ կարծիք:

— Մտացէ՛ք մեզ, մեր նախարարք, առաջ ո՞րը ուրացաք,  
 Երրորդութեան սուրբ անունը՞, թէ՞ Միաճնին մոռացաք,  
 Նորա անձառ Հօրէն ճնճունդն, թէ՞ ճընունդն կուսական.  
 Թէ՞ չարչարանքն Խաչի վերայ, թէ՞ սոսկալի զոհ մահուան:

— Ո՞ւր է ձեր սուրբ աւաղանի մէջը տուած խոստումը,  
 Որ որդեգիր եղաք Հօրը՝ Սրբոց Հոգւոց դրկումը.  
 Ո՞ւմը տուիք սուրբ մեռոնը, ո՞ւր կորցրրիք սուրբ նըշան,  
 Մեզ ծախեցէ՛ք Քառաթեր սյսօր գընով մեր արեան:

— «Հրաժարիմք սատանայէն» զուր է բերան ձեր ասել,  
 Գուք բանսարկուի զօրութեան հետ կրկնակի դաշն էք դրել.  
 Ասացէ՛ք մեզ, ո՞վ նախարարք, արդեօք ինչո՞վ խաբուեցաք,  
 Պարսից դենի մոլորութեան ի՞նչ սլատձառաւ ցանկացաք:

— Ոսկի, արծաթ քիչ ունեիք, քիչ էր ձեր փառք ու պատիւ,  
Հայաստանի գանձը ո՛ւմն է, ո՛վ քան զձեզ կայ աղնիւ.  
Հրեշտակային դասէն ելաք, սատանայի կարգ մըտաք,  
Առաքելոց օտար դարձաք, Յուդայի հետ դասուեցաք:

— Ի՛չ մի՛ ասէք՝ Հայաստանում տուն ունինք կամ ընտանիք,  
Ձե՛ն ճանաչում է՛լ ձեզ կանայք, ո՛չ դստերք ձեր, ո՛չ որդիք,  
Գուք է՛լ ծնունդ չէ՛ք Արամայ, Արամաղղն է ձեզ ցնկնել,  
Ի՛նչ էք գալիս է՛լ Հայաստան, է՛ն-է՛լ ուղում էք սղծել:

— Դարձէ՛ք գնացէ՛ք էլ Պարսկաստան, Հայք տանել ձեզ չին կարող.  
Գուք չէ՛ք իշխանք կամ նախարարք և ո՛չ ազգին էք տիրող:  
Ձունինք մենք մոգ կամ մոխրատուն, մեր հայրենի աւանդք չեն,  
Մեր քահանայք, եկեղեցիք մեզ բաւական և շատ են:

Ձե՛ն կարենում քաջ նախարարք գիւղացւոց բան հասկացնել,  
Երեսները դարձրնում են, ու չեն ուղում տեսանել.  
Թէպէտ սոքա աչքով, ունքով նշմարանք շատ են անում,  
Ա՛յլ գիւղացիք ոչինչ կերպով չեն բարկութեան սանձ դրնում:

Ենձարացած նախարարքը խորհուրդ արին, ցրուեցան,  
Հեռու հեռու ճանփաներով դէպ Արտաշատ փութացան.  
Ա՛յնտեղ էին ազգի գլուխք, և հովիւքը ժողովուած:  
Ա՛յնտեղ եկան նախարարքը բոլոր ազգէն անարգուած:

Ժողովք սուրբ Հարց Հայրաստեոց՝ Նախարարաց ընդունեց,  
Նոցա զիղջը և զըզջումը ազգի մէջը վճկայեց,  
Իմացան խեղճ գիւղացիքը, որ նախարարք չեն ծուած,  
Միւսանգամ գրկախառնեալ՝ ընդունեցին իշխանաց:

Ի՛նչ ասեմ էլ, թէ ի՛նչ կերպով ուրախացան Հայերը,  
Երբ ժողովի մէջ համարձակ ծունկ չոքեցաւ Վարդանը,  
Քրիստոսի սուրբ Մարմնով, Արեամբ երդում արաւ, ուխտ դրեց,  
Որ իւր արեամբ մաքրէ արատ ուրացութեան իւր անձնից.

Ինչպէս ասին, կատարեցին, գիւղացոց հետ միացան,  
 Միւսանդամ զօրք հաւաքեց, ոտքի կանգնեց Հայաստան:  
 Քայց դեռ կրօնի չըկար ուրեք, կրօնի սկիզբն ես արի,  
 Մէկ գեղի մէջ ձեռիս ցրտով մէկ հաստ մողի ծեծեցի:

Տեսան մողքը, որ Նախարարք է՛լ չեն ուզում օգնելու,  
 Անգոսնեցին Հայոց ուժը կամեցան փորձ փորձելու.  
 Մըտան մէկ փոքր եկեղեցի, որ մոխրանոց դարձրնեն,  
 Ես-է՛լ կամաց գիւղացոց հետ ժամը մըտոց յետներէն:

Տեսայ, որ մողն կամենում է սուրբ սեղանը քանդելու,  
 Հողւոյս մէջը մէկ դող ընկաւ, չըկարացի տուկալու.  
 Էն հաստ ու պինդ դաւազանը, որ ամեն օր ձեռիս էր,  
 Յանկարծ հասաւ մողի գլխին... մողը գետնին ձգուել էր:

Այս մէկ նշան դարձաւ Հայոց, ամենեքեան ղէնք ասին,  
 Շամբի մէջը մէկ կայծ էր այս, փայլեց բոց մէջ եղեգին.  
 Հրդեհեցան գիւղացիքը, սե օր ծագեց մողերուն,  
 Նիսկուհիքը երկիր ծածկեց, գետը դարձել էր արիւն:

Օ՛րհնդիկ անուն է՛լ չը մընաց Հայաստանի քնջումը,  
 Հայոց սուրը ամենայն տեղ յարթական էր կրօնումը.  
 Թէ՛ նախարարք և թէ՛ իշխանք զօրաց հետ կան միարան,  
 Կարճ միջոցում Պարսից ձեռքէն աղատուեցաւ Հայաստան.....

ԵՐԳ ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԳ:

Բայց Հայոց մէջ ընկել էր սէր մոլորամիտ մոգութեան,  
Վասակ ծածուկ Պարսից ազգին տալիս էր ձեռն օգնութեան,  
Ինչ որ Վարդան հաստատում էր, Վասակ գաղտնի կործանում,  
Հայոց ազգի միութիւնը՝ հընարքներով քայքայում:

Շրփոթ ձգեց իշխանաց մէջ, մէկզմէկէ բաժանեց,  
Շատի սիրտը գրրաւելով՝ ազանգի մէջ հաստատեց,  
Թշնամեացը միւսանդամ՝ ճանբայ բացեց Հայաստան,  
Տակնու վըրայ բերեց ազգը, ինքրն գոլով մարդըսան

Այս միջոցին Վախժանի անուն թագաւորը Աղուանից,  
Գեսալան շրկեց իշխաններէն՝ նըպաստ խընդրեց՝ դէմ Պարսից.  
Սերոխտ զօրեղ զօրաւարը. որ Հոնաց դէմ էր շրկած,  
Արշաւել էր Աղուանըստան հետ անհամար իւր զօրաց:

Իշխանք նըպաստ Աղուաններուն կամեցան շուտ հասցընել,  
Զօրաց կէսը ստիպուեցան քաջ Վարդանին աւանդել.  
Այս կէս զօրքով Վարդան գընաց Աղուանըստան Պարսից դէմ.  
Սերոխտ հասաւ Կուր գետոյն մօտ, ու կանգնեցան դէմ ու դէմ:

Թէպէտ Պարսից զօրքը շատ էր, և Հայերը քիչ էին,  
Եւ նոցա չափ զինուորական՝ պատրաստութիւն չունէին,  
Բայց յոյսերը երկնաւորի՝ օգնութեանը գընելով,  
Պատերազմը ըսկըսեցին՝ Պարսից վերայ վաղելով:

Անհրճարին կոտորածներ՝ արին Պարսից զօրաց մէջ,  
 Յաղթութիւնը երկար միջոց՝ անուժ էր սոսկ ելևէջ.  
 Կամսարական Արշաւիրը Վուրկ Տրսկային ըսպանեց,  
 Եւ թշնամեաց հալածական՝ յաղթեց ուժով, և վանեց:

Հատը ջրի մէջ ընկնելով՝ խեղդուեցան ու կորան,  
 Բոլոր Կուր դեռ իւր լայնութեամբ՝ փոխուեց կարմիր գոյն արեան.  
 Այնքան չէին ցամաքի մէջ՝ սրբով մեռած դիակներ,  
 Որքան ջուրի հոսանքները՝ կուլ տուեցին Պարսիկներ:

Աստուածային ըսքանչելեաց իսկ այս էր մեծ նրշանը,  
 Որ Հայերից միայն մէկ հատ եղաւ մեռնող կալուժը.  
 Մուշ Սեպուհը՝ որ Արշաւրի՝ նրման քաջիկ հրղօր էր,  
 Պարսից անթիւ բաղմութեան մէջ՝ մընաց, մահու առաւ վեր:

Այսքան անցքը աչքով տեսաք, դիտեմ որ լաւ հասկացաք,  
 Թէ Հայք քաջ են՝ երբ միարան՝ մէկ տեղ լինին, խմացաք.  
 Բայց երբ քակլի միութիւնը, բաժան բաժան լինելով,  
 Ի հարկէ որ՝ կը յաղթըվին՝ մէկդմէկու մատնելով:

Ինչպէս այժմ տեսանում էք՝ մեր իշխանաց գործքերը,  
 Ուրացելեն, ու Պարսից հետ՝ միացրել են զէնքերը.  
 Միտքերն ինչ է որ Հայստան՝ թշնամեաց ձեռք ձրգելով,  
 Իրանք իշխող լինին ազգին, հաւատքները թողնելով:

Բայց տեսնենք թէ՛ կը յաջողի՞ նոցա այս շար միտքերը.  
 Կարեն արդեօք ժառանգելու՝ մեր հայրենի երկիրը.  
 Ա՛չ ոչ կարծեմ. թէ և սակաւ՝ միջոց գըտնեն, ու տիրեն.  
 Փոքր ինչ յետոյ՝ առանց կարծեաց՝ սխտի բոլորն-էլ թողնեն:

Ո՛ր՝ դաւաճան, ո՛ր ուրացող, է լեալ երբէք երջանիկ,  
 Ժամանակեաց նորա կեանքը՝ կընի որպէս՝ մէկ ծաղիկ,  
 Փըչեց քամին, ու չորացաւ, թօթափեցան թերթերը.  
 Այնպէս սխտի շուտ անցանեն՝ ուրացողաց բաղդերը.

Մի՛ վըհատիք նոցա գործքէն, միտ բերելով հին բաներ,  
 Հայոց ազգը ե՛րբ է իւրեան լաւ օրերը ճանաչեր,  
 Կամ ե՛րբ իւրեան լաւ մարդոցը երախտիքը իմացել,  
 Կամ երախտեաց դէմ ապերախտ ու դաւաճան չէ՞ եղել :

Ի՞նչ արին սուրբ Լուսաւորչին, քանի՞ որ նա էր կենդան,  
 Թողի՞ն հանդարտ իւր աթոռում՝ ի հասակի ծերութեան,  
 Քանի՞ անգամ թողեց փախաւ՝ չարագործաց ձեռքերէն,  
 Մինչև մեռաւ, անյայտացաւ՝ անարժանից աչքերէն:

Տրդատի պէս թագաւորին՝ քանի՞ պատիկ նեղացրին,  
 Եւ վերջապէս մահադեղով՝ չէ՛ր՝ որ կեանքը վերջացրին,  
 Նորա տուած խրրատները՝ չար թուելով իշխանաց,  
 Ազգ ու երկիր խաւարեցրին, հատեալ նորա թէլ կենաց:

Թողի՞ն որդւոց Լուսաւորչի լուսաւորել Հայաստան,  
 Խաւարասէրք բընաւ կուղեն՝ որ աշտանուկ ունենան,  
 Արիատակէս ու Վարթանէս՝ մեղ լոյս էին ճրրագի,  
 Շիջուցին որ՝ իրանց չարիք շերելին մէջ՝ խաւարի:

Ի՞նչ ասեմ սուրբ Յուսիան համար, և Քրիզորիս իւր եղբօր:  
 Հայաստանի պարծանք էին՝ համանրման իւրեանց հօր,  
 Մեր իշխանքը չը դիմացան՝ մինչ երկուսն-էլ չըմեռան,  
 Նոցա կեանքին դահիճ դառաւ՝ երախտամոռ Հայաստան:

Արբ միտք բերենք մեծ Ներսէսին, սխալի փակենք աչքերը,  
 Որ չը տեսնենք մարդու երես, այնքան չար է գործքերը,  
 Անոր համար՝ որ նա ազգի փրկիչ եղաւ, նորոգող,  
 Մահադեղով սպանեցինք՝ մենք, որ ազգեմք դառնացող :

Ա՛յ վերացոյց մեր վրայէն արքայական պրսակը,  
 Եթէ Պարսից չը մատնէին՝ մեր չարամիտ իշխանքը,  
 Արշակունեաց ցեղէն էր մեր՝ ապերջանիկ թագաւոր,  
 Լուսաւորչի ցեղէն Սահակ՝ հովիւ հօտին բանաւոր:

Կարծեցին մեր չար իշխանքը՝ թէ իրենց լաւ կը լինի,  
 երբ որ մընան ինքնադուխտ առանց Հայոց արքայի.  
 Ասացին չէ մեզ պէտք իշխող՝ Արշակունեաց ցեղիցը,  
 եւ ոչ հովիւ կամ Հայրապետ՝ Լուսաւորչի տոհմիցը:

Ե՛հա այս է պրտուղները՝ որ այժմ մենք քաղումենք.  
 եւ դառնութեան մըրուրները՝ այն բաժակէն խրամունք.  
 Չարերը շուտ կորան չարով, բարիները մընացին,  
 Այլ բարեաց-էլ՝ այս չար օրեր՝ ամսնս ազգին, որ հասին:

Եյնցեալները ամսոսալու մեղադրելու ժամը չէ.  
 Չար թշնամին ահա եկել առջևներդ կանգնած է.  
 Գուք պիտի տաք մեծ սպտերազմ, ազգային է այս կրօն,  
 Անթիւ ազգի սաշտապանելու՝ վաթսուն հազար կաք հաղիւ:

Բայց ես յայտնի տեսանում եմ՝ որ դուք բընաւ չէք կամում,  
 Չեր գըլուխը՝ պահպանելու, կամ խընայել ձեր արիւն,  
 Գուք ձեզ զոհ էք՝ բերում ազգին, սուրբ հաւատոյն, սուրբ ուխտին,  
 Չեր ողջակէզ՝ ընդունելու՝ յերկնից եկել է Արդին:

Եյս Միածին՝ որ աշխարքում՝ իւր տաճարը հաստատեց,  
 Արարատեան սարի մօտը՝ Հայաստանը նա ընտրեց.  
 Ոսկի ուռամբ հարկանելով՝ դրբեց հիմն ի վիմի,  
 եւ այն մընաց՝ միայն սարձանք, և ապաւէն մեր ազգի:

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԵՐ ԿՈՒԵՐՈՐԳ

Բարձրացուցէ՛ք ձեր աչքերը, տես՛ք դալը Միածնի.  
Հաղարաւոր բանակներով նըստատաւոր մեր աղգի,  
Չեռին ունի շատ սըրսակներ, անթառամ լոյս ծաղկունքէն,  
Չեղ է տալիս՝ քաջ դօրականք՝ կարկառելով երկինքէն:

Մաջին թագ քո գլխոյն է՝ Մանկունեան քաջ Վարդան,  
Լուսաարայծառ փունջ բոլորած՝ տրբիտուր քո քաջութեան,  
Երանի՛ քեզ՝ իմ սիրական, աղնիւ իշխան փառաւոր,  
Որ քեզ համար՝ է պատրաստել՝ այնպէս սըրսակ լուսաւոր:

Երրորդ թագը՝ քո գլխոյն է՝ Խոռխոռունի քաջ Խարէն,  
Խորախորհուրդ՝ խորհրդակից՝ և մարտակից քաջաղէն.  
Խորհուրդ չարին կը խափանես՝ քո անարատ արիւնով,  
Խաչեցելոյն շուտ խաչակից դու կը լինիս քո մահով:

Երրորդ սըրսակ՝ քո է Արտակ՝ բարետոհմիկ Պալունի,  
Հայաստանի արգարայնող, և բարձրացնող քո աղգի,  
Արդար դատմամբ՝ քո թշնամեաց՝ ի խաւարն արտաքին,  
Քեզ համար նոր՝ ճանփայ բացիր յերանաւէտ ի Սղին:

Չորրորդըն քեզ՝ է պատրաստած՝ Տաճատ իշխան Քնթունեաց,  
Տաճար շինուած Հողւոյն Սրբոյ, և պարունակ՝ իւր շնորհաց.  
Տարադիր են՝ ջոկք ատելեաց՝ քո սիրական աշխարհէն,  
Նոցա անդուլ՝ հալածոււմ է՝ անսարտելի քո սուր դէն:

Հինգերորդըն՝ քեզ համար է՝ ո՞վ Քիմարսեան Հրմայեակ,  
 Համայնաջինջ կլնի քեզմով՝ այն մոգական դէն համակ,  
 Հրմայք չարին կըլուծանին, Հայաստանը կաղատուի,  
 Քո համբաւը քո հայրենեաց ամեն խորշ կու տարածուի:

Վեցերորդին՝ դու ես արժան՝ Քաջբերունիդ Ներսէ՛հ ջան.  
 Քաջ էին քո համայն նախնիք, և դու բերք ես քաջութեան.  
 Նախնի քաջաց՝ առաքինեաց՝ քեզ ճանապարհ է բացվում,  
 Քրնա՛ և մուտ նոցա դասըն՝ վերնադաւառ Ազենում:

Եօթներորդըն՝ քո է Վահան, Քրնունեաց քաջ նախարար,  
 Անյաղթ վահան էիր ազգիդ, դէմ թշնամեաց անհամար.  
 Վահ չեմ ասիր, քեզ սիրելի, այլ երանի՛ քեզ կուտամ,  
 Ինձմէն լուէ հըրաւիրման՝ առ տէր Յիսուս՝ նոր պատգամ:

Ութերորդին՝ ժառանգ դու ես՝ Ընծայեցի՛ քաջ Արսէն,  
 Ընծայ՝ նուէր բոլորաձիր՝ յանհուր սեղան և յանդէն.  
 Անարատ գառն՝ ողջակիզեալ՝ Միաճնին Հօր ի սեղան,  
 Սիրով հոգւոյդ՝ միշտ խարուկեալ՝ անոյշ բուրկէն ի բաւրման:

Իններորդըն քո բաժին է՝ Սրուանցըտեան Քարեզին,  
 Մանուկ տիովք ծաղկաղարդած՝ գոհար ակն մէջ ազգին,  
 Վրկայ մահուան մանկացելոյն՝ մահուն յաղթող ի մահուան,  
 Մահ քեզ տեսաւ ու ամաչեց՝ ի հասակէդ մանկական:

Եյս ինն քաջք՝ պիտի լինիք՝ իննեակ դասուց դասակից,  
 Սերովբէից, քերովբէից, և իշխանաց փառակից,  
 Հաղար ու վեց սուրբ ընկերօք միշտ բարեխօս Միաճնին,  
 Վասն նորա՝ սուրբ հաւատոյն՝ և իւրակերտ տաճարին:

Եւ դու Վարդան, վարդ կարմրերփեան, երբ որ առնուս պսակըդ,  
 Մի՛ մոռանար ինձ ծերունուոյս, մի՛ վերջացնէր աղօթքըդ.  
 Հայցէ՛ որ ես-էլ շուտով գամ, քեզ հետ լինել փառակից,  
 Կենացդ միշտ կըցորդ էի, ցանկամ լինել մահակից:

Պատուական է քո սուրբ արիւն, կարմիր ի գոյն նոր վարդի,  
 Հաճոյական սուրբ սրտարագ՝ կը լնի ի դէմ Միածնի,  
 Նա իւր արեամբ կը տեառնագրէ՝ կը սրբացնէ այդ արիւն,  
 Կարմիր արեանդ յիշատակաւ՝ պիտի պանծայ աղգ համբուն:

Եյդ արիւնով պիտի Պարսից՝ զանգիկ հուրը շիջանի,  
 Հայաստանը այդ արիւնով՝ պիտի նորոգ աղատիլի,  
 Վարդի նրման կը բուսանի՝ դարձեալ քո լոյս հաւատը,  
 Վարդագոյն քո սուրբ արիւնով՝ երբ սոողիլի արմատը:

Սահըն թո՛ղ ձեզ չը վախեցնէ՝ իւր չարաթոյն խայթոցով,  
 Նորա խայթոց՝ կը խամրանայ՝ այդ ձեր թափած արիւնով,  
 Նա կու սրգայ իւր կորուստը՝ յաւերակսրն դրժոխոց,  
 Կը կողկողի՝ երբ շիջանի՝ մեղաց թիւնեալ իւր խայթոց:

Թո՛ղ վախենան ուրացողքը, թո՛ղ վախենայ Վասակը,  
 Նորա մերձ է դատաստանը, և իւր արժան պըսակը,  
 Այն պըսակի տակը պիտի՝ բոլոր անձամբ ճմլըլի,  
 Այն պըսակի տակը պիտի՝ իւր հատուցումն վըճարըլի:

Դառըն կ'ընի սյս հատուցումն՝ արդարութեան ատենէն,  
 Ամբարիշտքը դործի կ'ընին՝ ամբարշտաց տանջելէն,  
 Ուրացողը կը շօշափէ՝ ուրացութեան պատիժը,  
 Իւր ուրացեալ ընկերներէն՝ կը լուծանէ վըրէժը:

Եյն ժամանակ նահատակաց՝ ուխտապահաց բաղմութիւն,  
 Կը վայելէ իւրեան արդեանց, և հաւատոյ բերկրութիւն,  
 Երբ որ դասքըն ուրացողաց՝ ամօթապարտ կողկողին,  
 Նոքա իւրեանց սուրբ հաւատով ի տրտմութեանց կ'սփոփուին,

Եյնպէս կ'ընի և այն օրն-էլ, ինչպէս որ այժմ այսօր է,  
 Ահա լոյսըն առաւօտեան՝ մութ գիշերին մերժում է.  
 Բացվում է այդ՝ արշալուսոյ, խոր խաւարը հեռացաւ,  
 Եւ արեգակն արևելից՝ մեզ ծագելու մօտեցաւ:

Վ արդան, արի, քեզ համբուրեմ, տամ քեզ վերջին՝ ողջոյնըս,  
Ա՛ռ իմ վերջին օրհնութիւնըս, առ իմ հողւոյ՝ աւանդըս,  
Խոնարհեցո՛ք քո գրչութիւն՝ ներքոյ խաչի նըշանին,  
Որ կայ այժմ իմ ձեռումը, և է նրալստ քո անձին:

Հեռի ճամբայ սխտի երթաս, յաւեժական այդ ուղւով,  
Քո ցանկալին Յիսուս տեսնես՝ լուսափայլեալ քո հողւով:  
Գընա՛ Վարդան, իմ անձկալի, և Տէր ընդ քեզ եղիցի,  
Գընա՛ քեզ է՝ Յիսուս մընում՝ և բացել է դուռն երկնի:

Դարձեալ կասեմ՝ թէ Տէր ընդ քեզ . և ընդ ձեզ իսկ՝ լիցի Տէր,  
Ո՛վ քաջազէն դունգք Արամեան, դունգք համաշունչ և զօրքեր,  
Հանեցէ՛ք ձեր երկասյրիքը, թո՛ղ սուրբ խաչի տեառնադրիւն,  
Թո՛ղ պահապան ձեզ միշտ լինի՝ այս հովանի սուրբ խաչին:

Ե՛հա՛ Պարսիկք երևում են, որ տեղերէն շարժել են,  
Վարդան՝ կարգ դիր՝ քո գնդերուն, որ թշնամեաց դէմ ելլին.  
Մէկ ոտնփոխ՝ է, և Յիսուս՝ ձեզ ընդ առաջ կը տեսնէք,  
Չեր գլխները սուրբ պրսակօք՝ ձեր արեամբ կու պրսակէք:

Ո՛վ Զօրագլուխ սուրբ Հաւատոյ՝ Որդի և Բան Միածին.  
Գու ընկալցիս՝ այս սլառարագ՝ քեզ ի հաճոյս ի յերկին.  
Գու զՀայր քո հաշտեցուցես՝ ընդ աւերակս մեր երկրի,  
Սըղաւորայ՝ մեր ըսիտփանք՝ տացէ յաւեժ սուրբ Հողի:

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԵՐԵՔԵՐՈՐԴ

Օրբքն Պարսից գալիս էին ամսերու պէս սևացած,  
Երբ որ գարնան եղանակին կ'ուզեն տալ յող անձրևաց,  
Իրրօշները օղի մէջը ծածանում են գոյն դգոյն,  
Փրղաց ստքի փոշիները՝ օղն են անում մըթնագոյն:

Ուրախ զուարթ՝ Հայոց զօրքը՝ գրնաց առաջ թշնամեաց,  
Վարդանի դէմ Սիւնեաց զօրքով՝ չար Վասակը կայր կանգնած.  
Որ երբ տեսաւ թէ Վարդանը՝ ուղիղ իւր դէմ է գալիս,  
Փախաւ մըտաւ փրղաց մէջը՝ թաք կեցաւ ընդ գարշելիս:

Հնչում էին փողք ու թմբուկք, դրբընդեցնում երկինքը,  
Նետք ու նիզակք թռչում էն, օղ ծածկում են սրլաքքը.  
Աղաղակը տարածվում է լերանց բլրոց մէջերէն,  
Արձագանքը արտադարձում՝ նոցա դատարկ այրերէն:

Վատաղել-են պատերազմողք, կատաղել-են փիղերը,  
Նոցա աւել մոլեղնումեն՝ Հայոց նեախի խոցերը.  
Ոսնակոխ են անում մարդոց, և կնճիթով հարկանում,  
Դէպ ի Հայոց զօրաց գունդը՝ սրբամըտութեամբ յարձակում:

Չորս գումարտակ էր բաժանած՝ Հայոց բաջաց բանակը,  
Առաջին գունդն էր Ներշապուհ՝ Արծրունույ ձեռումը,  
Մոկաց իշխանն և Միհրչապուհ՝ սորա ընկեր օղնական  
Ընդդէմ Պարսից՝ արծիւներու և բաղէից պէս թըռան:

Երկրորդ գունդը՝ որ աջ թևն էր, Խոսիսոուունոյն Խորէնին,  
Յանձնըլած էր միանգամայն Քաջբերունի Ներսէսին,  
Սա օգնական նորա զօրաց անպարտելի գունդերով,  
Վաղեց ընդդէմ Պարսից զօրաց՝ մերկապատեան սուսերով:

Երրորդ գունդը՝ Վանանգացի՝ քաջ Թաթուլին էր յանձնած.  
Եւ օգնական՝ նրմա՛ Տաճատ՝ Գրնթունին էր՝ կարդըլած.  
Նոքա յետեն էին դրրած՝ յատուկ վասըն սրահետի,  
Որ ուր ուրեք՝ պիտոյ լինի, հասցընուն ձեռք՝ նրպաստի:

Չորրորդի մէջ ինքն էր Վարդան, զօրավարն այն խաչակիր,  
Եւ օգնական նորա կշտին՝ Կամսարական Արշաւիր.  
Առաւելեան Փափակ իշխան՝ հանդերձ քաջիկ հեծելովք,  
Համազասպեան հրզօր եղբայր՝ սուրբ Վարդանայ՝ ընկերօք:

Սոքա առաջ սրմբակակոխ՝ իմ ջրերս յուղեցին,  
Յետոյ իւրեանց կարմիր արեամբ՝ ինձ վարդապոյն ներկեցին.  
Խառնըլեցան երկու կողմանք, ձին, ու հեծեալք, փիղերը,  
Կոյր զկուրայն են կոտորում երկբերանեան սուրերը:

Քանի գընում սաստկանում էր այն կոտորած և այն մարտ,  
Ո՛չ դաշտերու ձայնք են լռում, և ո՛չ երկինքն է հանգարտ.  
Գոռում երկինք առանց որոտ, գոռում երկիր անսասան,  
Խոխոջում է ամենայն տեղ՝ սահանարաց դեռ արեան:

Լքըրըլեցան դիակներով լայնածաւալ դաշտերը,  
Երիվարաց հետ սրակեցան գերանդազէն փիղերը,  
Վիրաւորքը մըռընչում են, կարեւլէրքըն մեռանում,  
Սանձարձակ ձին խըխընջալով իւր հեծելոյն է ստոռում:

Խիղախում են քաջաց գունդքը, երկչոտները փախչում են,  
Գեղարդունքըն թոշտուելով՝ ասպարները ջարդում են.  
Այս տեղ խոցուած՝ քաշում նետը և հանում է իւր վէրքէն,  
Այն տեղ ընկած քաջ զինուորը՝ հոգին փրչում նիղակէն:

Երբ բարձրացաւ արեգակը՝ ճաճանչ ձգեց զօրքերուն,  
 ճաճանչները ընկաւ վերայ՝ երկաթակապ դէնքերուն,  
 Նըշոյլները ըսկըսեցին՝ լերանց վերայ փայլելու,  
 Սար ու ձորը ցոլանում են՝ որպէս ի մէջ բոցերու:

Սըթանում է արեգական՝ լոյսը նոցա նետերէն,  
 Որ թռչում են անթիւ անհուն՝ զօրաց ուժեղ ձեռքերէն.  
 Քանի՞ հազարն է վեր թռչում, քանի հազարն ցած գալիս,  
 Ամեն մէկը մէկ մէկ հատ զոհ է պըտուտում թռչելիս:

Նարձատւում են աղեղները, ճօճանք թռչող նիզակաց,  
 Իւրեանց ահեղ շրկահիւնով փակում դրրունք լըսելեաց.  
 Շըռինդք, շաչիւնք և շառաչիւնք դըղըրդում են օդերը,  
 Գափիւնք, դոփիւնք և դըրընդիւնք սասանեցնում երկիրը:

Վարդան ինչպէս սրբած մանդաղ՝ մըտած Պարսից զօրաց մէջ,  
 Հունձ է անում գնդերումըն, և նորա դէմ չըկայ վէճ.  
 Միայն փախուտն է աղատում՝ նորա ահեղ սըրիցը,  
 Այլ սակաւք են՝ փըրկըլածքը՝ անխոնջ արագ բաղկիցը:

Պարսից Մուշկան սպարապետ՝ տեսաւ այս գործ Վարդանայ,  
 Փըղաց անշարժ երամակը՝ յանկարծ հանեց դէմ նորայ.  
 Այլ Վարդանի աջոյն ընդդէմ՝ չէր կարող փիղ կանդնելու,  
 Գիտէր Վարդան՝ թէ փըղերուն՝ ինչպէս պիտի յաղթելու:

Երանաւէտ՝ կենաց դուռըն՝ վաղ էր բացվել սուրբերուն,  
 Վսկայական մահուամբ կնքիլ՝ հասաւ ժամը քաջերուն.  
 Քրիստոս կանդնած էր այն դըրան, և կոչում էր սիրելեաց,  
 Ով ցանկացող էր այն փառաց, արժանացան պըսակաց:

Վերնակամար առագաստում՝ պատրաստ էր ճաշ Յիսուսի,  
 Հըրաւիրում էր Հարսանիք՝ անմահ և սուրբ Փեսայի.  
 Բըրարիոն ծաղիկ ձեռին՝ եկաւ դեսպան երկնային,  
 Յաւեժական ուրախութիւն՝ փոխադրել սուրբ Վարդանին:

Նոր աւաղան մկրտութեան՝ այն դաշտումն ուղղեցաւ,  
 Ուրացութեան արատիքն՝ կարմիր արեամբ սրբեցաւ,  
 Հողին որ միշտ՝ ցանկանում էր՝ թռչել երթալ առ Փրկիչ,  
 Արիւնալի վերաբերան գրտաւ, առաւ իւր թրոխ:

Դեռ չէր արե՛ եկել մօտիկ՝ դէս իւր մայրը՝ մտնելու,  
 Որ Հայկազանց բանակի մէջ՝ ըսկիղն արաւ՝ լըսվելու:  
 Ի՞նչ էր այն ձայն, ի՞նչ լըսվեցաւ, ասա՛՝ Տղմուտ, մի՛ լըներ,  
 Ես-էլ կ'ուղեմ՝ իմանալու, թէ ի՞նչ ձայն էր տարածվեր:

Եղէգ, դու մեղմ՝ հնչէ՛ այն ձայն, և ինձ-էլ տուր՝ իմացում,  
 Երևի թէ՛ գուժի ձայն է, որ Տղմուտը՝ չէ՛ ասում:  
 Հանեց եղէգ՝ կողկողազին՝ ձայնը, տուեց սխառասխան,  
 Այն ձայնը որ՝ տարածվեցաւ, այս էր. անկաւ Սուրբ Վարդան,

Իրաւացի է լըներդ, Տղմուտ, ես-էլ կու լընեմ,  
 Եւ եղեգիս այսուհետեւ այս բանը կու սխառուիրեմ:  
 Որ երբ զարթի՛ ի խոր քրնոյ, բաղմամանակ լընութեան,  
 Թո՛ղ աւաղէ կողկողազին, ողբայ ու լայ ըղձարդան:

Վարդան՝ քո ողբ՝ քաղցր է Հայոց՝ քան զերդփառաց, հարսանեաց.  
 Քեզ հետ կատուած են յիշատակք՝ մեր ամեն մէկ քաջարեաց,  
 Ոչ թէ եղէգն և կամ սրբինգ՝ են քո արեան նուիրեալ:  
 Տուն Աստուածեան Եկեղեցի՛ քե է յաւէժ ըզմայլեալ:



23 MAR 2013

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

00000

